

Դատական գործ N: ԵԿԴ/0072/01/09

Երբ է գործը ստացվել:	11-05-2009
Քրեական գործի համարը:	0072/01/09
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	58201109
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Մտեղադրվում է այն բանի համար, որ հանդիսանալով Նոր Նորքի տարածքային ստորաբաժանումում գրանցված Ավա Դեկոր ՍՊԸ-ի տնօրեն, Էրեբունի փողոցի և Նոր Արեշ 14 հատման կետում գործող խանութում զբաղվելով կոշիկի առևտրով, քննությամբ դեռևս չպարզված անձանց օժանդակությամբ ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտի օգտագործմամբ մաստեր քարդ միջնորդ վճարային և ՀՀ գործող Արմենիան քարդ ՓԲԸ համակարգերի միջոցով գումար է հափշտակել, ապա այն օրինականացրել
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Վազգեն
Ազգանուն	Փխրիկյան
Հայրանուն	Համբարձումի
Հասցե	Ֆիրդուսի փող. տուն 50
Հոդված_1	
Հոդված	177 Մաս 2 Կետ 2
Հոդված_1	
Հոդված	190 Մաս 1
Դատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	6.3
Իրեղեն ապացույց	
Իրեղեն ապացույցի անվանումը:	
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	
Խափանման միջոց:	Կալանավորում
Երբ:	11-05-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ
Դատավորի անուն:	Ժորա Սարգսի Վարդանյան

Դատավոր				
Դատարանի անվանում:	Կենտրոն և Նորք-Մարաշ			
Դատավորի անուն:				
Երբ:	12-05-2009			
Որոշումը ուղարկվել է կողմերին:	12-05-2009			
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	12-05-2009			
Այլ նշումներ:				
Երբ:	25-05-2009			
Երբ:	05-06-2009			
Երբ:	12-06-2009			
Երբ:	18-06-2009			
Երբ:	25-06-2009			
Երբ:	30-06-2009			
Դատավարության կողմեր:	Պաշտպան			
Դատավարության կողմեր:	Պաշտպան			
Դատավարության կողմեր				
Անուն	Արթուր			
Ազգանուն	Աթարբեկյան			
Հասցե	Երզնկյան 1, բն.37			
Այլ նշումներ:				
Ժամ:	16:00			
Ամսաթիվ:	30-06-2009			
Այլ նշումներ:				
Ամսաթիվ:	30-06-2009			
Հոդված				
Հոդված	177	Մաս 2	Կետ 2	
Հոդված				
Հոդված	190	Մաս 1	Կետ 1	
Այլ:				
Հիմնական:	Որոշակի ժամկետով ազատազրկում			
Լրացուցիչ:				
Այլ:				
Դատական ակտի բովանդակությունը:	Գործ ԵԿԴ/0072/01/09թ. ԴԱՏԱՎՃԻՈՒ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով .			

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ժորա Վարդանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ Էմմա Ավետիսյանի

մասնակցությամբ

ՄԵՂԱԴՐՈՂ ՀՀ Գլխավոր դատախազության դատախազ
Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՆԵՐ՝ Ա.ԱԹԱՐԲԵԿՅԱՆԻ
Ի.ԳԱԶԱՐՈՎԱՅԻ

դռնբաց դատական նիստում, 2009թ. հունիսի 30-ին, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի.

Վազգեն Համբարձումի Փխրիկյանի.

ծնված 02.05.1982թ., Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, չամուսնացած, աշխատել է որպես «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի տնօրեն, նախկինում չդատված, բնակվող՝ ք. Երևան, Ֆիրդուսի փողոց, տուն 50:
/«Նուբարաշեն» ՔԿՀ կալանավոր/

Թիվ 58201109 քրեական գործը հարուցվել է 02.09.2009թ. ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում:

Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին կետով:

Ձերբակալվել է 09.02.2009թ.:

Առաջադրված մեղադրանքի բովանդակությունը.

Նախաքննության մարմինը հիմնավորված է համարել, որ ամբաստանյալ Վազգեն Փխրիկյանը հանդիսանալով «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի տնօրեն, Երևանի Նոր-Արեշ 14 և Էրեբունի փողոցների հատման կետում իրեն պատկանող տարածքում ծավալել է առևտրային գործունեություն, մասնավորապես, կոշիկի վաճառք: Ամբ. Վազգեն Փխրիկյանը 24.09.2008թ. պայմանագիր է կնքել «Արարատբանկ» ԲԲԸ-ի հետ բանկային պլաստիկ քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին, որից հետո բանկի կողմից նրա խանութում տեղադրվել է ՊՕՍ-տերմինալ և առևտուրը իրականացրել է ինչպես կանխիկ, այնպես էլ բանկային քարտերով: Բանկի համապատասխան աշխատակիցը անցկացրել է ուսուցում՝ Վազգեն Փխրիկյանի և խանութում որպես վաճառողուհի աշխատող՝ գործով վկա Հայաստան Գասպարյանի հետ ՊՕՍ-տերմինալի շահագործման կանոնների մասին, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան ակտ:

Ամբաստանյալ Վազգեն Փխրիկյանը քննությամբ չչարգված անձանց օժանդակությամբ, ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտի օգտագործմամբ «Master card» միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող «Արմենիան քարդ» ՓԲԸ-ի համակարգերի միջոցով գումար է հափշտակել, ապա օրինականացրել այն:

Այսպես, ամբ. Վազգեն Փխրիկյանը 2008թ. հոկտեմբերի 3-ին, որպես վճարում ընդունել է «MBNA AMERICA BANC» կազմակերպության կողմից թողարկած 5490998311026349 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 1.000.000 ՀՀ դրամը փոխանցել է «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի «Արարատբանկ» ԲԲ-ում սպասարկող հաշվեհամարին:

Ամբ. Վ. Փխրիկյանը գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 1.000.000 ՀՀ դրամը ստացել է հանցավոր գործունեության արդյունքում, նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը, այն կանխիկացրել, որպես հասույթ մուտքագրել է ընկերության դրամարկղ և հանցավոր ճանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել փոխանցումներ ընկերության հաշվեհամարից, որի համար նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 06.05.2009թ.:

Ապացույցները, որոնց հետազոտման վրա հիմնված են դատարանի հետևությունները.

Ըստ մեղազարկող հանցանքի էության, ամբ. Վազգեն Փխրիկյանը թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում իրեն մեղավոր չճանաչեց և հրաժարվեց ցուցմունք տալուց:

Ամբ. Վազգեն Փխրիկյանի նման դիրքորոշումը դատարանը գնահատում է որպես պաշտպանական ռազմավարություն, նա հետապնդում է քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակ, իսկ նրա կատարած հանցավոր արարքը հիմնավորվեց գործով ձեռք բերված ու հետազոտված հետևյալ ապացույցներով.

-Գործով վկա Հայաստան Արարատի Գասպարյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 2008թ. հունվարի 8-ից որպես վաճառողուհի աշխատանքի է անցել Վազգեն Փխրիկյանին պատկանող «Ավա դեկոր» կոշիկի վաճառքի սրահում: Վաճառքում այդ ժամանակ առկա կոշիկների մեկ զույգի միջին արժեքը կազմել է 5.500-7.500 ՀՀ դրամ: Խանութը գործել է առավոտյան 10:00-ից մինչև 20.00-ը: Հանգստի օրերը ընտրել է անձամբ՝ ամիսը 1 կամ 2 օր, սակայն պատահել է, որ Վազգեն Փխրիկյանն իրեն աշխատանքի չի կանչել: 2008թ. հոկտեմբերի 3-ին Փխրիկյանի նախածեռնությամբ աշխատանքի չի գնացել, քանի որ ըստ նրա՝ այդ օրը խանութ պետք է նոր ապրանք բերեին: Նույն օրը խանութում կատարված 1.000.000 ՀՀ դրամի վաճառքի վերաբերյալ իրեն ոչինչ հայտնի չէ:

Հայտնեց նաև, որ սրահում տեղադրված է եղել POS-տերմինալի սարքավորումը, սակայն ինքը դրանով որևէ գործարք չի կատարել: Խանութում իր աշխատած ժամանակահատվածում չի եղել դեպք, որ մեկ օրում կատարվի մեկ միլիոն դրամի չափով վաճառք, օրեկան միջին հաշվով վաճառքի գումարը կազմել է 25-30 հազար ՀՀ դրամ: Խանութում փոխարինող վաճառող չի եղել և իր բացակայության օրերին վաճառքն իրականացրել է Վազգեն Փխրիկյանը, սակայն այդ օրերին վաճառքի գումարի չափը երբեք չի եղել 1.000.000 ՀՀ դրամի չափով:

-Գործով վկա Հակոբ Արամի Սարգսյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով առ այն, որ 2007 թվականից աշխատում է «Արարատբանկ» ԲԲԸ-ում որպես պլաստիկ վարչության տեխնիկական բաժնի պետ: 24.09.2008թ. բանկի և «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր բանկային պլաստիկ քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին և խանութում տեղադրվել է ՊՕՍ-տերմինալ: 2008թ. հոկտեմբերի ամսին տեղեկացել է, որ «Արմենիան քարդ» ՓԲԸ-ից հայտնել են այն մասին, որ 24.09.2008թ. «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի խանութում ՊՕՍ-տերմինալով կատարվել է 1.000.000 ՀՀ դրամի վաճառք, որը ձանաչվել է զեղծարար, սակայն չի հիշում, այդ մասին գրավոր գրություն ստացվել էր, թե՛ ոչ: 2009թ. հունվարին նշված ՍՊԸ-ի տնօրեն Վազգեն Փխրիկյանը դիմել է բանկին, որից հետո դադարեցվել կնքված պայմանագրի գործունեությունը ու իրենց է վերադարձրել ՊՕՍ-տերմինալը:

- Վկա Գրիգոր Վարդանի Ցոլակյանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 2007թ.-ից աշխատել է «Արարատբանկ» ԲԲԸ-ում որպես մասնագետ, 2008թ. սեպտեմբերից հանդիսանում է պլաստիկ քարտերով գործառնությունների վարչության պետ: 2008թ. սեպտեմբերի 24-ին բանկի և «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր՝ բանկային պլաստիկ քարտերը որպես վճարման միջոց ընդունելու մասին և խանութում տեղադրվել է ՊՕՍ-տերմինալ: 2008թ. հոկտեմբեր ամսին բանկը գրություն է ստացել «Արմենիան քարդ» ՓԲԸ-ից այն մասին, որ 24.09.2008թ. «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի խանութում ՊՕՍ-տերմինալով կատարվել է 1.000.000 ՀՀ դրամի վաճառք, որը կասկածելի է, իսկ

2009թ. հունվարին նշված ՍՊԸ-ի տնօրեն Վազգեն Փխրիկյանը դիմել է բանկին և դադարեցրել է կնքված պայմանագրի գործունեությունը՝ վերադարձնելով ՊՕՍ-տերմինալը: Տվյալ դեպքում, կատարվել էր առուծախի գործարք պլաստիկ քարտի վճարումով: Համաձայն հետզանձման ստանդարտի, եթե հետզանձումը կատարվում է առավելագույնը 120 օրվա ընթացքում, գործարքը համարվում է զեղծարար, իսկ տվյալ դեպքում փաստացի հետզանձում տեղի չի ունեցել: Այսինքն, այլ քարտապանի քարտով, առանց քարտապանին տեղյակ պահելու, 3-րդ անձը կատարել է գործարք: Հայտնեց, որ բանկը քաղաքացական հայցի պահանջ չի ներկայացնում, քանի որ գործարքից փաստացի վնաս չի պատճառվել:

- 2008թ. նոյեմբերի 11-ի թիվ 166-08 գրությամբ «Արմենիան քարդ» ՓԲԸ-ից ստացված կասկածելի գործարքների ցանկով և նշված ապացույցի 02.02.2009թ. գննության արձանագրությամբ:

-2008թ. դեկտեմբերի 18-ին «Արարատբանկ» ԲԲԸ-ց ստացված թիվ 3379-7 գրությամբ, համաձայն որի «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի կետում ՊՕՍ-տերմինալի միջոցով կատարվել է 1.000.000 ՀՀ դրամի գործարք: Ըստ նույն գրության «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն, տվյալ գործարքը համարվում է զեղծարար:

- «Արարատբանկ» ԲԲԸ-ի և «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի միջև առևտրի և սպասարկման կետերում բանկային պլաստիկ քարտերը որպես վճարման միջոց ընդունելու վերաբերյալ 24.08.2008թ. կնքված պայմանագրով և այդ պայմանագրի գննության արձանագրությամբ:

-ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.02.2009թ. ստացված գրությամբ, համաձայն որի «Ավա-Դեկոր» ընկերության անվամբ 2007-2008թ. ընթացքում մաքսային ձևակերպումներ չեն կատարվել:

-«Արարատբանկ» ԲԲԸ-ից 19.02.2009թ. առգրավված «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի հաշվեհամարի բանկային քաղվածքով:

-ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետից 24.02.2009թ. ստացված գրությամբ, ըստ որի «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի տնօրեն և հիմնադիր է հանդիսանում Վազգեն Փխրիկյանը:

-ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից 20.03.2009թ. ստացված փորձագետի եզրակացությամբ, որով հաստատվում է, որ գործարքների փաստաթղթավորման և հաշվապահական ձևակերպումները նպատակաուղղված են եղել Վազգեն Փխրիկյանի կողմից ՊՕՍ-տերմինալի միջոցով բանկի հաճախորդներից գումարների հափշտակման փաստի քողարկմանն, այսինքն, անօրինական ճանապարհով ստացված եկամտի իրական բնույթի և ծագման աղբյուրի խեղաթյուրման միջոցով՝ ընդհանուր առմամբ 1.000.000 ՀՀ դրամ գումարի եկամտի օրինականացմանը: Դատարանի իրավական վերլուծությունը.

Գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը հաստատված համարեց, որ ամբաստանյալ Վազգեն Փխրիկյանը հանդիսանալով «Ավա Դեկոր» ՍՊԸ-ի տնօրեն, քննությամբ չպարզված անձանց օժանդակությամբ, ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող կեղծ քարտի օգտագործմամբ «Մաստեր քարդ» միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող «Արմենիան քարդ» ՓԲԸ-ի համակարգերի միջոցով հափշտակել է 1.000.000 ՀՀ դրամի չափով գումար, ապա այդ գումարն օրինականացրել է, այսինքն կատարել է հանցավոր արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով, որոնք որակված են ճիշտ, և նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի այդ հոդվածներով:

Ամբաստանյալ Վազգեն Փխրիկյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ կատարած արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների

	<p>բացակայությունը: Որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի առավ այն, որ ամբաստանյալը երիտասարդ է, բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված չի եղել:</p> <p>Ամբաստանյալ Վ.Փխրիկյանը թեև իրեն մեղավոր չճանաչեց, սակայն խնդրեց իր նկատմամբ կիրառել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 19.06.2009թ. որոշումը և ազատել նշանակված պատժի կրումից, իսկ մեղադրողը չառարկեց այդ միջնորդության դեմ:</p> <p>Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-375 հոդվածներով դատարանը. Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>Վազգեն Համբարձումի Փխրիկյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով, նրան դատապարտել ազատազրկման ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 1-ին մասով՝ 1/մեկ/ տարի ժամկետով առանց գույքի բռնագրավման :</p> <p>Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածը՝ նշանակված պատիժները մասնակի գումարելով, վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 3/երեք/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:</p> <p>Նշանակված պատժին հաշվակցելով նախնական կալանքի տակ գտնված 4/չորս/ ամիս 21/քսանմեկ/ օրը, վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 2/երկու/ տարի 7/յոթ/ ամիս 9/ինը/ օր՝ առանց գույքի բռնագրավման:</p> <p>Կիրառելով «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2009թ. հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը՝ Վազգեն Փխրիկյանին ազատել դատարանի կողմից նշանակված պատիժը կրելուց:</p> <p>Խափանման միջոց կալանքը վերացնել ու Վազգեն Փխրիկյանին անհապաղ ազատ արձակել դատարանի դահլիճից: Դատավճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ</p>
Դատական ակտի ամսաթիվը:	30-06-2009
Ամսաթիվ:	30-06-2009
Այլ նշումներ:	
Որոշման բովանդակությունը:	
Համաներման մասին որոշման ընդունման ամսաթիվ:	19-06-2009
Համաներման մասին որոշման կետ:	1
Համաներման մասին որոշման ենթակետ:	1
Ամսաթիվ:	03-08-2009
Գործը հանձնվել է գրասենյակ:	04-08-2009
Էջերի քանակ:	226

Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ամսաթվիվ:	13-12-2010
Էջերի քանակը:	226
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	